

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ժողովրդի մեծագույն ձգտումն է եղել իր ազգային պետականության ստեղծումը, որն այսօր բախտավոր իրողություն է: Մեր նորաստեղծ ազգային պետությունն իր կայացման ու զորացման ճանապարհին դեռևս մեծ դժվարություններ ունի հաղթահարելու, բազմաթիվ ու ծանրակշիռ խնդիրներ ունի իրականացնելու:

Աղետաբեր երկրաշարժ, բազմահազար անօթևան բռնագաղթվածներ, արցախահայության տագնապալի կացություն, քայքայված տնտեսություն, երկարատև շրջափակումներ, այս և բազմաթիվ այլ դժվարություններ հաղթահարելի են միայն ազգի բոլոր անդամների ուժերի ու հնարավորությունների համախումբ գործադրման, միասնական ու միաբան գործելու պարագաներում:

Հայ ժողովրդի գոյատևման ու բարգավաճման գլխավոր նախապայմանի՝ մեր ազգային պետականության հաստատման, Մայր Հայրենիքի տնտեսական, գիտական, կրթական, հոգևոր ու մշակութային զարգացման խնդիրների լուծմանը մասնաբաժին ու ակտիվ մասնակցություն ունենալը յուրաքանչյուր հայի համար պետք է մեծագույն պատիվ և պարտք դառնա:

Եվ ուրեմն «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի կազմակերպումը չպետք է ընկատել որպես սոսկական հանգանակություն կամ բարեգործություն, այլ ազգային կամավոր տուրք, քաղաքացիական պարտք հայոց անկախ հանրապետության և հայ ազգի հանդեպ:

Մենք կոչ ենք անում մեր բոլոր ազգակիցներին, անկախ նրանց բնակության վայրից, ազգային ինքնագիտակցության ամե-

նավսեմ զգացումներով օգտվելու իր պետականության վերակերտմանը մասնակից դառնալու ընձեռված հնարավորությունից՝ սերունդներին անկախ ու բարգավաճ հայրենիք ժառանգելու ակնկալությամբ:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ՝

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

16 Մայիսի 1992 թ.